

Տրարատի ներկայ համարում՝ հրատարակում ենք մի հետաքրքիր կանոնադրութիւն, որ ստացել է խմբագրութիւնս Արժ. Եսայի վարդապետ Աստուածատրեանից, որ երկար տարիներ Մանչեստրում և Լոնդոնում յաջորդութեան պաշտօն էր վարում։ Կանոնադրութիւնը վերաբերում է Մոլոդական Պոթուշան և այլ քաղաքաց Հայ պատանեկաց ժողովին։ Նա հաստատուած է Ս. Էջմիածնի Եղիազար կաթողիկոսից (1680—1691)։ ապա Աղեքսանդր կաթողիկոսից, ապա Արղութեանց Յովսէփ Կաթողիկոսից (առաջնորդութեան ժամանակ 1790 թ.) և ի վերջո Քեսարարիու Գրիգոր Արքեպիսկոպոսից (Երևի Զաքարեան)։ Ուրեմն այդ կանոնադրութիւնը մինչև ներկայ դարուս առաջին քառորդը դշութիւն ունեցել է։ Կանոնադրութիւնը պատանեկաց բարոյական կրթութեան է իսկապէս վերաբերում։ Նա որոշում է այն հոգեւոր և մարմնաւոր պարտականութիւնն, որոնք իւրաքանչյիւր Հայ պատանեկաց պարտական էր սրբութեամբ կատարել։ Զանցառուն կրում էր պատիժ, որ աւելի կայանում էր տուգանաց մէջ յօգուտեկեղեցւոյ կամ որևէ է բարի գործի։ Ամեն Հայ պատանի 12 տարեկան հասակից (Երևի մինչև ամուսնանալը) պարտական էր մտնել ժողովի մէջ, որ կառավարում էին ժողովից ընտրած պատանեկապետն և ընտրեալք։ Խրաբանչյիւր պատանի որոշեալ առութք էր վճարում յօգուտ ժողովի գանձարանին, Համեմատ իւր կարողութեան։ Այս կանոնադրութիւնը ցոյց է տալիս, որ Մոլոտաւիայի գաղթական Հայերը յսոյժ զաւակասէր են եղած և մեծ հոգ և ինամբ տարած են իրանց զաւակաց դաստիարակութեան վերայ, պատանեկութեան ժամանակից վարժեցնելով նրանց իրանց թէ հոգեւոր և թէ հասարակական պարտականութիւնը սրբութեամբ կատարելու։ Դպրոցների և այլ դաստիարակական հաստատութեանց պարտը լցուցել են այդպիսի կանոնադրութեամբ։ Ուստի ծագել է այդ կանոնադրութիւնը — հետաքրքրական է շատ Յայտնի է որ Մոլոտաւիայ Հայ գաղթականք զանազան կողմերից եկած են։ Արդեօք այդ կանոնները պատանեկաց Համար իրանց բուն Հայրենիքից այստանից բերած են և նոցա թուկանալը տեսնելով, հաստատել տուած են Ս. Էջմիածնայ Եղիազար կաթողիկոսից, և ապա ուրիշներից, նրանց յաչս պատանեկաց աւելի սրբագործուած ցոյց տալու համար, թէ նոքա տեղական ծագումն ունին։ Դժբաղդաբար մեր մատենագիրը ազգային կեանքի նկարագրութիւն թողած չեն։ այլ աւելի ուշք դարձրել են և իրանց գրութեանց նիւթ արել են կամ պատերազմական անցքերն ու բնական երև յիմերն և կամ կրօնական նկեղեցական ինդիրները։ Իրաւ է պատանեկաց եկեղեցի յաճախելու, մեծերի Հետ յարգանքը վարուելու, նրանց հնազանդելու սովորութիւնքն զրեթէ ընդհանուր եղած են Հայերիս մէջ մինչև վերջին ժամանակներն և շատ տեղերում այժմն էլ կայ։ ուսց իրեւ սովորութիւն և ոչ թէ կանոններով որոշուած պարտականութիւն եղած է այդ։ Մոլոտաւիայ Հայ պատանեկաց կանոնադրութիւնը

յիշեցնումէ մեզ հին Սպարտացւոց կանոնները, որոց պատանիները որոշեալ հասակն առնելից յետ պատկանում էին Հասարակութեան և դաստիարակութեան էին Հասարակական Հաստատութեանց մէջ, բոլորովին ազատ ծնողաց իշխանութիւնից և ազգեցութիւնից, նոյնը մասսամբ երևումէ և՛ Մոլդաւիոյ հայ պատանեկաց կանոնների մէջ, ըստ որում Մոլդաւիայի հայ պատանեկալը ժամանելից յետ, բոլորովին ենթարկում է ժողովի որոշումներին, որումներին, որոնց գէմ ոչ ծնողք և ոչ ազգականք նրան պաշտպանելու իրաւումք ունեն. Ձանազանութիւնը նրանումն է, որ Սպարտացին ստանում էր զինուորական դաստիարակութիւն և դառնում էր Հայրենեաց քաջ զինուոր, իսկ Մոլդաւացի հայ պատանեկալը կրօնական—Հասարակական դաստիարակութիւն էր ստանում, Հասարակութեան ապագայ ընտիր անդամ և լաւ բրիստոնեայ լինելու համար:

Եթէ Մոլդաւիոյ հայ պատենակաց կանոնադրութիւնը տեղական ծագումն ունի, նա պէտք է հետևողութիւն լինէր տեղական ժողովրդոց սովորութեան, բայց այդպիսի սովորութիւն, որը ան մենք կարդացած ենք Մոլդաւացոց վարուց և բարուց նկարագիրը, նոցա մէջ չէ եղել, ուստի և՛ կմնայ մեզ կարծել, որ եթէ Մոլդաւիոյ հայ պատանեկաց կանոնադրութիւնը տեղական է, նա պէտք է լինի հետևանքը այն հանգամանքի, որ հայ գաղթական ծնողք գուցէ տեսնելով իրանց զաւակաց վարուց և բարուց փոփոխութիւնը և նոցա իրանց կրօնական և ազգային զգացմանց ու պարտականութեանց մէջ թուլանալը, խառնութելով տեղական պատանեկաց ընկերութեան մէջ և յաճախ յարաբերութիւն ունենալով նոցա հետ, կազմել են այդ կանոնադրութիւնն ու նրան Հայ եկեղեցու վարչական գլխո՞ւ ընդհանրական Հայրապետի հաստատութեամբ սրբագրծած, որպէս զի կարողանան իրանց զաւակներին Հայ եկեղեցու գրկում և հայ ազգայնութեան մէջ ամուր պաշել՝ նրանցից առանձին կանոններով կաշկանդուած մի եղբայրութիւն կալմելով, որ պիտի ունենար իւր պարտականութիւնքը դէպի եկեղեցին և ազգը, իսկ այժմ երբ այդ կանոնները բարձի թողի արած են ներկայ դարուս սկզբից (որովհին են նոցա հաստատութեան և փորձադրութեան մասին յիշատակութիւն չկայ) նկատումէ Մոլդաւիոյ Հայերի մէջ ևս, կարծես, ամեն ուրեբ ընդհանրացած անտարբերութիւնը. Թէ այսպէս և թէ այնպէս, բանասիրաց թողնելով հետազոտել Մոլտափիոյ հայ պատանեկաց կանոնադրութեան ծագումն, արժան ենք համարում յայսանել, թէ ցանկալի է, որ ներկայ բարօյական կրօնական ու Հասարակական պարտականութեանց զգացմանց նուազման ժամանակ, համեմատ տեղական հանգամանքներին և պահանջներին կազմուէին նմանօրինակ գեղեցիկ պատանեկական եղբայրութիւնք, իրանց գլխաւորներով և կանոններով, որով պատանեկալը ներկայում կարող կինէին պահպանուել բարուց ապականիչ շատ սովորութիւններից և կտառնային ընտիր անդամք հասարակութեանց:

## ԿԱՆՈՆՍԴՐՈՒԹՅՈՒՆ.

1.

Ցամի ներմարմնութեան Փրկչին 1690. և Հայոց Ռձլթ.

Եղեւ ի ճուբճովու 1) Մնմիքլուշն.

Նախ՝ ի փառո ամենասրբոյ Երրգրդութեանն Հօր և Որդւոյ  
և Հոգւոյն Սրբոյ Երկրորդ ի յիշատակ ապագայից մերազնեաց  
և երրորդ՝ վասն կառավարութեան Եղբայրութեանն Երիտա-  
սարդոց, այսինքն, կտրճուորացն Պօչանու, Եաշու, և Ուր-  
մանու:

Ի Կաթողիկոսութեան Հայոց Տեառն Եղիտարու  
ի Փոխանորդութեան Առաջնորդի տեղւոյն Աէլուվու վանից  
Տեառն Օքսէնտիոփի մակ՝ Վրձրէս գոչ վարդապետի.  
Եւ յԱւագերեցութեան  
Տեառն Եղբայրի մակ՝ Մնտրուլին 2):

Որոիչետե պարտ և հարկաւոր է վերոյգրեալ քաղաքացն  
ունել և պահել զկտրմնուն պրաստաւան 5) վասն թաղման մե-  
ռելոց իւրեանց և վասն ուրախութեան կենդանեաց իւրեանց,  
պարտ և հարկաւոր է նմանապէս տալ պրաստաւային զամրու-  
թիւն և զհաստատութիւն կանոնաց նորին. զի և վատահն 4)  
կարիցէ բարւոք մեծաւորութիւն տռնել, և կտրիմներն գի-  
տասցեն հնազանդիլ վատահին իւրեանց և այոպէս պրաստա-  
ւան Եղիցի փառաւոր յաջս ամենեցուն, արժանապատիւ ըստ  
արժանեաց և իսաղաղ և անխովլ ի մէջ Եղբայրակցաց կըտ-  
րիմնուն:

Արդ՝ կանոնք և հաստատութիւն Պրաստաւայիս այս է.

(1) Զեօրջեու Սէն-Միքլուշ (Ս. Նիկողայոսի քաղաք).

(2) Հպարտ: (3) Ժողով պատանեկաց: (4) Պատանեկապետ:

Նաին՝ յուլուր ուխտակառարու թեան իւրեանց, ամենեքեան խոսովավանեալք և ազտշաբրու թեամբ հաղորդիցին մարմնայ և արեան Ցեառն մերոյ Ցիսուսի Քրիստոսի. և այս է ձշմարիտ ուխտակառարու թիւն, որ մեզ ի նախնեաց մերոց աւանդեցաւ, և այսպէս առաւել ևո ընդունելի լինի մարմնաւոր ուխտան. այսինքն՝ կերակուրն և ըմպելին իւրեանց, զոր ոովոր են և պարտին կառարել ամ ըստ ամէ այս պրաստաւայի կտրիներն ըստ կարողութեան իւրեանց:

Երկրորդ՝ յաւուրօս կիւրակէից ամենեքեան եղբարքն գան լսել և տեսանել զկատարումն խորհրդոյ վատարագին, չեկողին ճուրումն<sup>1)</sup>, թէ վատահէ երկու շեշտագ, թէ կտրիճ է մէկ շեշտագ:

Երրորդ՝ իւրեանց ժողովրդեան մեռելոյ թաղմանն և փոս փորելոյ հանգիպին տուն հանգիպողքն. չեկողին ճուրումն թէ փոսի թէ մոմի պաշխայ<sup>2)</sup> պաշխայ ճուրում կայ. վատահին երկու երկու շեշտագ, կտրիճին մէկ մէկ շեշտագ:

Չորրորդ՝ պերպնծան<sup>3)</sup> խմէն կտրիճ ունենալուն ու խնդիրքին գօրայ<sup>4)</sup>:

Հինգերորդ՝ նշանի բաժին. կտրճէ մէկ կարմիր, սակայն խնդրուածքի ու ունենալու գօրայ. վատահն հետ պրաստաւային կարին թողելուալ<sup>5)</sup> միջէն:

Վեցերորդ՝ պսակի ժամանակին ֆլորի պարտ է առնուլ որպէս առաջնորդն և քահանայն:

Ետքներորդ՝ ուխտի ժամանակն ամենեքեան տարցին զիւրեանց ֆլորին ըստ սովորութեանն:

Ութերորդ՝ ամենայն կտրիճ որ տունը հանդիպի, պարտական է պսակի ժամանակն երթալու հետ վատահին փեսայի յուրախութիւն յառաւօտուն մինչեւ ի պսակէն տուն գառնալն. չեկողին ճուրումն ըստ սովորութեան. խկ յետ պսակին հարկի ժամանակն կամք կտրիճինն է գալ եաւ<sup>6)</sup> չգալ ի հարունիս. Իններսրդ՝ պարտական է վատահն առաջի Աստուծոյ նախ՝

(1) Տուգանք: (2) Առանձին: (3) Անախընծայ: (4) Համեմատ: (5) Թողելուալ: շպահանջել: (6) Կամ: Առաջի (7) առաջը (8)

որչափ կարն իցէ շոշել զպրաստաւան. զոտակն շահեցնու-  
ղշահեցուածն և առաւել շահեցնու-լ զյարութեան և զյայտ-  
նութեան հայրմերի և աւետիսի կելուրն<sup>(1)</sup>), զպօակին զթաղ-  
մանն և զայլ սովորականն զամենայն, ընդ գրով գրել, և չտա-  
լին նմանապէս զի յետ լրման տարւոյն համարս տայցէ առաջի  
եկեղեցպանին, ժողովրդեան և պրաստաւային, որպէս զի՝ եթէ  
յետ համարս տալոյն գտանիցի շահաւէտ պրաստաւային, առ-  
ցէ զպատիւ բարի տնտեսութեան իւրոյ, և եթէ գտանիցի  
վնասաբեր, նմանապէս գործուցէ զվնասն և առցէ զնախա-  
տինս վնասակարութեան իւրոյ:

Դարձեալ պարտական է վատաշն կոռավարել զկտրիճներն  
ըստ արդարութեան, մի ըստ նենգութեան ատելութեան, կամ  
նախանձու կոմ ակնարկութեան, զի զայնպիսին դատէ Աս-  
տուած, այլ հեղութեամբ իւրատելով և շահելով զամենես-  
եան ըստ իւրաքանչիւր բնութեան, վասն զի՝ զայնպիսին սիրէ  
Տէր, և վասն այսորիկ զխաղաղութիւն պարզեւէ:

Իսկ եթէ հանդիպիցի ոք ի կորիճնուն միջէ, որ իցէ անհնա-  
զանդ, կռոււարար, ունայնախօս, և կամ այլ ինչ չարութեան  
տէր, պարտ է գատուլ ըստ պրաստաւային, ոչի խում տեղն,  
յորժամ արբեալ է, այլ լուրջուտ առնել զդատաստանն, և  
ապա յետ դատաստանին, որպէս և դատապարտեսցէ դատաս-  
տանն, այնպէս եղիցի:

Եւ եթէ իխատ գայթակղիչ լինի, զայնպիսին ի լանձուլին<sup>(2)</sup>)  
այնքան դատեսցին, մինչև ապաշխարիցէ. և եթէ ծնողք կամ  
բարեկամք խառնիցին վասն կտրիճի որդւոյ կամ եղբօր և  
այլն, զայնպիսին թէ հոգեոր և թէ մարմնաւոր պատժօք դա-  
տեսցէ առաջնորդն:

Վասն այսորիկ՝ արժան է կտրիճնուն գիտնալու թէ՝ որչափ  
խաղաղ և հնազանդ պարտին լինիլ իւրեանց մեծաւորացն,  
պրաստաւային և վատահին, որք ըստ այնմ ունիցին բարի  
անուն, փառք և պատիւ, և որչափ անհնազանդ լինին և

(1) Եկամուտն. (2) Շղթայ (1) (5) զայնպիսին (2) Ամառաւան (1)

խոռովիչ պրաստուային, այնչափ ևս անարգած և անլարգի լինելոց են և ինքեանք և պրաստաւայի անուն կու կոռրի:

Ուստի՞ ջանայցեն ամենեքեան զմիմեանո շահել և իրատել լինել հնազանդ, առ ի կատարել զհրամանն վատաշին չբովելու քուրդի է) եա ծեծի, այլ լսել զքօրանգան<sup>2)</sup> և կատարել մէկ ըլլայ:

Միթէ որդէս զի՞ զայս ամենայն կատարելով արժանի լիցին քառասուն մանկանցն պատկաց թէ ասո մարմնով և թէ անդ հոգւով, և ևս ընկալցին զիտառս և զպատիւ յամենեցունց և սիրելի լիցին թէ Աստուծոյ և թէ մարդկան. զոր Տէրն մեր Յիսուս Քրիստոս եւր ամենակարող զօրութեամբն հաստատեսցէ ի ի ոիրոս կորիճնուն և տացէ նոցա զօրութիւն աճել և բաղմանալ սիրով և խոնարհութեամբ ի մէջ նոցա, և մեծանալ յաջս ամենեցուն: Եւ մեզ ևս Աստուածային օրհնութեամբ և նախարինամութեամբ օրհնեմք և հաստատեմք զպրաստաւայս այս, յանսւն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, և խոստանամք սիրելի լինել սիրելեացն նորա և թշնամի թշնամեացն նորա: Ուստի և ի հաստափութիւն յիշատակարանիս գրի ես Օգ. Վ. Վ. զիմ մօհրնն) և զիմ ձեռնագիրնի վերայ սորա: Թվին ՌՃՂԹ. սեպտ. մի:

### Ի ՃՐԵՐՃՈՎՄ ՍՆՈՒՔԵԼՈՒՉՆ.

Ընդ իսկականին սոյն օրինակս համեմատ է, Գրիգոր Արքեպիսկոպոս Սրբոյ Էջմիածնի և Աւաշնորդ Մօլտովալախիու և Պեղարապիու, և կաւալէր:

Զկնի հաստատութեան պրաստաւայիս, հաճոյ թուեցաւ կը-տարբնուն վատահ գնելու բզ Ստեփանն՝ որդի Պօջանու Լուսիկ երեսփոխանին, զոր և խնդրելով դրին առաջի վերոյգրեալ ժողովրդեանն: Արդ՝ ի ժամանակի վատահութեան իւրոյ, գտան կտրիճվորք այսոքիկ:

Ցանկ և կարգ կտրճվորացն Պօջանու, Եաշու և Ոռումանու,

(1) Հայհանաց, (2) Պատուէր, (3) Կնիքն,

ի ժամանակս վատահութեան Ստեփանին:

Ստեփանն վատահ.

Լէպէտն Զատիկինը.

Անտրեաշն Միթքոյինը.

Լուսիկը Զատիկինը.

Մարտիրոսն Յովհաննէսինը.

Խաչերեսն աէր Զատիկինը.

Սահակը Յատուրինը.

Մինասը Գայինտրայինը.

Խաչիկն Խաչերեսինը.

Դօմերը Սէրաթցինը.

Ստեփանն Գրիգոր Յուսէփինը.

Խաչիկն Մանուկինը.

Միթքան Զապուրինը.

Յակովը Սէլլիարին աղբարը.

Լուսիկն Թորոսինը.

Ասուատուրը Խաչգոյինը.

Խիկօլն Զատիկինը.

Թորոսն Երիցփոխանան.

Խաչիկն Միթքցինը.

Օվանէսն Տումբրանիքինը.

Խաչիկն Գօշոդան.

Գրիգորն Յակոբինը.

Խաչատուրն Գանտրայինը.

Մանուկն Կիւրեղինը.

Յակորն Սէրաթցինը.

Յակորն Ասցինը.

Լէպէտն Ցիագօնինը.

Յակորչան Լուսիկինը.

Խաչիկն Սէլլիարին աղբարը.

Վարդիկը Վասիկինը.

Օվանէսը Խաչգոյինը.

Յակորչան Սիմօնինը.

Յուսէփն Գրիգորինը.

Մարտիրոսն Օվանէս Եկեղեցպանինը.

Սագօն Խաչատուրինը.

Վարդանը Խաչգուլցին.

Թորոսն Խնկանսոսինը.

Գրիգորն Վարդիկինը.

Ղազարն Լուսիկինը.

Թորոսն Անտօնինը.

Կիրակօն Տօնիկինը.

Յովհաննէսն Ակոէնաինը.

Ասուատուրն Սիմաւոնինը.

Աչար Զուգովանի որդի.

Որոց ջամն եղե 45.

Կոնդակ՝ ծովսէփի Արքեպիսկոպոսի իշխանազն Արդութեանց, որով վերոտին հաստատէ զկարգ և զկանոնս սլրաստաւայիհ որ հաստատեալն էր 100 ամօք յառաջ քան զինքն:

Քրիստոսի փրկագործ Աւետարանին պաշտօնեայ և լուսազրդ Արքոյ Աթոռոյն Էջմիածնի ծայրագոյն նուիրակ Ռուսաց երկրի ամենայն Հայոց Առաջնորդ, հիմնադիր նոր Նախիջեանայ և այցելու ընթ իշխանութեամբ երկուց կայսերացն եղեալ բոլոր Հայոց Աղքիս Յովուշի Արքեպիսկոպոս:

Յորմէ Աստուածային ամենառաջ օրհնութիւնն և նախախնամական գթութիւնն հանդերձ ստուգիւ սիրով սուրբ Հոգւոյն ճշմարտիր ծաւալեսցի և հանգիցէ ի վերայ համայնից հայկասէր օրհնեալ ժողովրդոյդ՝ սիրելի և հոգեսոր որդւոցդ մերոց, և լուսածին զաւակացդ մօրն մերոյ լուսատուի գերագահ և Սուրբ Աթոռոյն Էջմիածնի, որը ի յԱստուածախնամ քաղաքս Փօթիշան կայք զետեղետոլ՝ Քահանայից, իշխանաց, մեծատանց, տոլվաթաւորաց, վաճառականաց, երեցփոխաց և գանձապետաց, Արչեստաւորաց և առհաստրակ օրհնեալ ժողովրդոց ամենից, մեծաց և փոքերց, խնդալ ի Տէր յարագուարձ ցնծութեամբ և բերկրութեամբ, ամէն:

Ենորհք ընդ ձեզ և երկնաւոր խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ ամենակալէ և ի Տեառնէ մերմէ Յիսուսէ Գրիստոսէ, և ի սրբոյ Հոգւոյն կենարաբէ, իջեալ հանգիցէ ի վերայ ձեր, եկեսցէ և բնակեսցի առ ձեզ իբրև զյորձանս գետոց և որպէս զվտակս աղբերաց յորդահոս բղխմամբ և առառապէս ծաւալմամբ, ընդ որոյ հովանաւորութեամբն զօրացիք միշտ. ամէն:

Այլ և օրհնեսցէ զձեզ Տէր Աստուած մեր. և զարդարետ պայծառացնացէ զամենեսեանդ հոգւով և մարմնով, տամրգ և տեղեօք, որդւովք և դստերօք, զարմօք և զաւակօք, աղգօք և ընտանեօք, ոիրելիօք և բարեկամօք, ընյիւք և ապրանօք, անդօք և անդաստանօք, այգեստանօք և բուրաստանօք, առիւք և տրիք, շահօք և վաճառօք.

Նաև ատացէ ձեզ Տէր Աստուած մեր զերկար կեանս և առզութիւն, կարողութիւն և զօրութիւն, առ միմեանս ճըշմարիտ սէր և միաբանութիւն, և պրաստաւային ձերոյ, այսինքն ժողովոյդ պատանեկաց՝ հաստատութիւն և բարւոք հնազանդութիւն և բարեաց գործոց ձերոց յաջողութիւն, որպէս զի աճիցէ և բաղմասցի ի վերայ ձեր օրհնութիւն Աստուածային օրըստօրէ և հանգիցէ ի հոգիս և մարմինս ձեր յարաժամ. ամէն:

Եւ ընդ շնորհածաւալ օրհնութեանս մերոյ, ծաներսւք սիրելի որդիք մեր, և լուսածնունդ զաւակունք Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, զի ըստ հրամանի Աստուածային գրոց, ամենայն

ծնող պարտական է իրատել և ուսուցանել զծնեալն, և ամենայն ծնեալ պարտական է զիսրատն ծնողին իւրոյ լսել, առնել և կատարել: Սոյնո գոյ քնականաբար առ ամենայն մարդիկ, զի Աստուածադադիր ասհման է տպաւորեալ և ունակացեալ ի բնութիւնս մարդկային, որով ամենայն աշխարհ կառավարի: Եւ որպէս ի մէջ մարմնաւոր հարց և զաւակաց գոյ այս կանոն, այսպէս և ի մէջ հոգեոր հարց և որդւոց: Եւ հոգեոր հարց են հոգեոր վերակացուքն եկեղեցւոյ սրբոյ, այսինքն հայրապետք, վարդապետք, և քահանայք, որոց հոգեոր իրատուց եւ կանոնաց պարտին լսող և կատարող լինել հոգեոր որդիք նոցին, այսինքն, ժողովուրդ ք եկեղեցւոյ սրբոյ, համայն բանաւոր հօաքն Քրիստոսի, ըստ այնմ զ'որ ասէ առաքեալն սուրբ: «Ունկնդիր լերուք առաջնորդաց ձերոց և հպատակ կացէք նոցա»:

Արդ՝ ըստ այսմ հոգեոր պարտաւորութեանս մերոյ, մինչ հանդիպեցաք ի քաղաքս Թօթիշան, և կամեցաք զհոգեոր բարեկարգութիւն, ինչ առնել սրբոյ եկեղեցւոյ մերոյ, որպէս և արարաք քանի մի կանոնիւք, ապա աղերս մատուցին մեզ, առ հասարակ ժողովուրդ քաղաքիս, նորոգել զվաղեմի սավարութիւնն պրաստաւայ կոչեցեալ պատանեկաց:

Զհետ երթեալ և մեր նախնեացն մերոց սրբազնից հայրապետացն սրբոյ Աթոռոյն Էջմիածնի և ամենայն Հայոց (կաթողիկոսի) Տեառն Աղեքսանդրու Զուղայեցւոյ և ի ժամանակի նորին եղեալ Սչովու սուրբ Օգունտ վանից առաջնորդի տեառն Օգունտ Արքեպիսկոպոսի, ևս և հոգեծին ծնողին իմոյ ի Քրիստոս հանգուցելոյ երանութեանցն Աստուծոյ արժանաւոր տեառն Արքմէսօն հոգելոյս հայրապետին ամենայն Հայոց և բարձրագահ Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի: որ ըստ խնդրոյ Սչովու ժողովրդեանն, ի ձեռն Քփիրենց ազնուամեծար Աղազայ Յովհաննէոի որդի ազնիւ Աղազայ Գրիգորին, նորոգեալ էր ի Սուրբ Էջմիածնին Տեառն Աղէքսանդրու կաթողիկոսի հրամանաւ եղալ կանոնս պատանեկաց. յթգունտեայ Արքեպիսկոպոսէն ի ԱՄՒԹ թուոջն մերում և յունիսի ծԴ:

Ահա զնոյնն նորոգ գրել ետու և իմով ձեռամբ ստորագրեցի

և իմ մեծ կնքովս կնքեցի և վերահաստատեցի, զի այսու կանոնաւ վարեսցին Աստուծով զօրացեալ պատանեակը Փօթիշանու օրհնելոյ քաղաքիս, և պատանեկապետք նոցին որպէս կանոնացեալ է ի ներքոյ, զորա հրամայեմ պահել անխափան և կատարել:

Զայս կանոնս և օրէնս կարգեցի և հաստատեցի ի մէջ Քրիստոսասէր ժողովոյն պատանեկաց, որ պրաստաւայ կոչի ըստ սովորութեան գաւառիս, յորում բնակիմք:

Որպէս զի սոյն պրաստաւայ կոչեցեալ ժողովս պատանեկաց, լիցի ի ներքոյ ձեռաց և հրամանաց եկեղեցպան իշխանին, որ է գործակալ մեր և սրբոյ Աստուածաէջ և Քրիստոսակերու Աթոռոյն Էջմիածնի:

Եւ եկեղեցպան գործակալն այն պարան է կարգել և տնօրինել զժողով պատանեկաց այսպէս.

Նախ՝ պարտ է նմա զամենայն նորահաս պատանեակս յերկոտասան ամացն ի վեր ժողովել ի միասին ի ժողով մի, զի կայցեն միաբանութեամբ, և յամենայն գործառնութիւնս հասարակականս, որ իւրեանց վայելի, ի միասին իցեն:

Երկրորդ՝ եկեղեցական գործակալն պարախ զերկուս գլխաւորուլնուրել ի միջոյն նոյն ժողովել պատանեկացն և կացուցանել ի վերայ նոցա գլխաւորս և պատանեկապետս (որք ըստ սովորութեան գաւառիս Վատահ կոչեն) և հրաման տալոյ նոցա մերով հրամանաւ և իշխանութեամբ, և ի մէնջ զվկայական և հրամայական գիր ևս տալ ի ձեռս նոցա, որպէս զի՝ իշխանութիւն ունիցին ի վերայ ժողովոյն պատանեկաց, և մի այլ ոք իշխեսցէ ի վերայ նոցա, բայց միայն ի ներքոյ ձեռաց և հրամանաց եկեղեցպան գործակալին իցեն յամենայն ժամ: Եւ զդատաստանս պատանեկացն նոյն պատանեկապետքն արասցեն, և հրամայեսցեն իշխանարար զինչ առնել արժան իցէ նոցա, որպէս ի ներքոյ ցուցանելոց եմք, և առնել տայցեն նոցա զամենայն գործս և զգացտօնս որ իւրեանց պատկանի, առ ի հաստատութիւն ժողովոյն իւրեանց: Եւ նոյն ժողովն պատանեկաց պարտին հնազանդիլ և խոնարհիլ պատանեկապետացն իւրեանց և գամենայն օրինուոր և ըստ կարգի հրամայեալն ի

նոցանէ ըստ հրամանի կոնդակիս առնել և կատարել յօժարութեամբ մեծաւ, որպէս զի՝ արժանացցին ողորմութեան և գըթութեանն Աստուծոյ, և զշնորհս մօրն մերոյ լուսատուի Սրբոյ Աթոռոյն Էջմիածնի ընկալցին, և զօրացցին զօրութեամբ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի, և երկնաձիր պարգևօք ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ:

Աւրեմն՝ և դուք, սիրելի որդիք մեր, համօրէն պատանեակք Աստուծախնամ՝ քաղաքիս Փօթիշանու, պարտիք զհնազանդութիւն և զորդիական հարազատութիւն ձեր ցուցանել, զկանոնս և զոահմանադրութիւնս անխափան կատարել, որպէս ի նախնեաց հետէ ունիք ի ձեզ հաստատեալ. որք և պարտիք զժողովդ ձեր (որ պատաւայ կոչի) յորդւոց յորդիս և մինչեւ ի յաւիտեանս ժամանակաց հաստատումն պահել ի յԱստուծախնամ՝ քաղաքս:

Եւ արդ՝ հաստատութիւն ժողովոյս պատանեկաց այսու կերպիւ պարտի լինել:

Յառաջագոյն մինչ գան պատանեակքն և մտանին ի ժողովն, զկնի երկստասան ամաց իւրեանց, պարտին տալ զկանոնեալ տուրսն իւրեանց (զոր պերպնծայ կոչեն ի գաւառոզն), ի ձեռս պատանեկապետացն և այս նախընծայ տուրքս պատանեկաց՝ երեք կերպիւ է ըստ կարողութեան տուողին:

Առաջինն՝ ԶՃ. ստակ. երկրորդն՝ ԴՃ ստակ, և երրորդն՝ ԲՃ ստակ, զսրս և արկանել պարտին ի գանձանակն Սրբոյ եկեղեցւոյն, առ ի հաստատութիւն ժողովոյն իւրեանց, և պարտին ամենայն պատանեակք և պատանեկապետք, զայս պարտքս տալ, որ է Հոգեւոր պարտք իւրեանց, և զանուանս տուողացն պատանեկապետքն պարտին գրել ի մէջ գրեոյն պատանեկաց՝ յորում ամենայն համաժողով պատանեկաց անուանքն գրեալք են. (որ ըստ գաւառին սովորութեան կոչի գաղաստիկ): Իսկ ամենայն կանոնք և կարգք ժողովայս պատանեկաց կրկին են, մին առ Հոգեւորն վերաբերի և միւսն ի մարմնաւորն. Հոգեւորքն են՝ վասն շահաւետութեան Հոգւոյ, և մարմնաւորքն՝ վասն օգտից մարմնաւոր գործառնութեանց: Հոգեւորաց առաջինն է այս, զի ժողովն պատանեկաց, զուխան իւրեանց կատարեացեն,

զորս ի բնէ անտի կանոնեալ են վասն սոցա, որ ի նշանադրեալ աւուրն երթիցեն միաբանութեամբ ի սուրբ վանքն Օգսէնտի, և զհոգեւոր ուխտն կատարեսցեն, և յայնմ ուխտի աւուրն պարտին ամենայն պատանեակքն խոստովանիլ և հաղորդիլ է կենարար մարմնոյ և արենէն Քրիստոսի, և ապա զմարմնաւու կերակուրն պատրաստել, ոչ թէ միայն վասն աղքատաց վայելոյ, որում նախապէս են պարտական, այլ և վասն ժողովըրդեանն ուտելոյ և ըմպելոյ, և նոքօք ուրախութիւնս և ցընծութիւնս առնելոյ:

Եւ ով ոք ի պատանեկաց ոչ եկեսցէ ի յայն ուխտն իւրեանց թճկ. ստակ տուգանս տացէ վանիցն:

Երկրորդ՝ պարտ է ամենայն պատանի, ով ոք որ ի տան գտանիցի ի պատրաստի, երթալ ի թաղումն մեռելոց և թաղել զնոսաթէ հարուստ իցէ մեռեալն և թէ աղքատ, որք պարտին ի միասին գտանիլ ի փորել գերեզմանին, և յետ այնորիկ ի թաղելն զմեռեալն՝ վառեալ մոմեղինօք, և ով ոք ի փորելն զգերեզմանն՝ անդ ոչ գտանիցի Խ. ստակ տացէ տուգանս: Խոկ ով ոք քաժանման մոմեղինին ոչ ժամանեացի, Լ. ստակ տացէ տուգանս, իսկ թէ պատանեկապետքն իցեն, երկու տակ (կրկին) տացին տուգանս:

Երրորդ՝ եթէ ոք ի պատանեացն՝ առանց հրամանի պատանեկապետին ելցէ ի միջոյ ժողովոյն և գնասցէ ի յիւր բանն և ի գործն և ոչ հարցանիցէ զպատանեկապետն՝ Լ. ստակ տուգանս տացէ թէ կամայ և թէ ակամայ:

Չորրորդ՝ պարտին ամենայն պատանիքն ի տօնի ծննդեանն Քրիստոսի ի խթման երեկոյին երթալ ի տունս իւրեանց պատանեկապետացն վասն աւետիս ասելոյ. և ապա ընդ պատանեկապետացն ի միասին երթիցեն ամենեքեան ի տունս ամենայն ժողովըրդեանն ասել զաւետիս թէ մեծատանց և թէ աղքատաց, և ամենայն ժողովուրդքն պարտին ըստ կարողութեան տալ նոցա գրամս, որ վասն շինութեանն սուրբ եկեղեցւոյ և պայծառութեան նորին է: Եւ որ պատանի որ ոչ երթիցէ ի տուն պատանեկապետին ասել զաւետիս՝ մէկ հարիւր ստակ տուգանս առցեն ի նմանէ վասն եկեղեցւոյն, թէ կամայ և թէ ակամայ:

Հինգերորդ՝ նմանապէս ի սուրբ Յարութեան Զատկին, ի մեռելոց երկուշաբթի օրն, պարտին երթալ ի տունս պատանեկապետացն, վասն Քրիստոս յարեաւ ասելոյ, և նոքօք հանդերձ երթալ ի տունս ամենայն ժողովրդեանն և զՀայր մեր ասել վասն ննջեցելոցն հոգւոց ի յիշաաակ նոցին։ Եւ ով ոք ոչ հրթիցէ նոյնպէս մէկ հարիւր ստակ տուգանս առցեն ի նմանէ։

Վեցերորդ՝ ամենայն պատանիք պարտին ի սուրբ Զատկին տալ զիանոնեալ թեմինն, որ է տուրք ինչ հոգեւոր, և այս ևս երեք կերպ, ըստ կարողութեան և ըստ պատուոյ։ Պատանեկապետքն իւրեանց համանման պատանեօքն տացեն կ. կ. ստակ, իսկ քան զնոսա նոււաստքն ԽԵ. ԽԵ. ստակ, և շատ յետինքն Լ. Լ. ստակ զոր պարտին ամենայն պատանիքն՝ անխափան տալ, զի հոգեւոր պարտք է իւրեանց, որ է վասն աղքատ մեռեալս թաղելոյ, և վասն յիշատակ լինելոյ ի մէջ եկեղեցւոյն։

Եօթներորդ՝ յամենայն շաբաթ օրն պարտական են պատանիքն տալ զպատարագիս, և այս վասն հոգւոց վախճանեալ կըտըրճացն է, և վասն անփորձ պահպանութեան կենդանեացն իւրեանց։

Ութերորդ՝ թէպէտ յամենայն աւուր պարտական են յեկեղեցիս երթալ ի ժամ՝ աղօթից, այլ՝ մանաւանդ յամենայն մեծօր և յամենայն կիւրակէի անխափան պարտին երթալ յեկեղեցին, և ի ժամ իւղաբերից աւետարանին և ի սուրբ պատարագին անդ գտանիլ։ Եւ ով ոք ի ժամ ընթերցման իւղաբերից աւետարանին յեկեղեցւոջն ոչ գտցի, ՓԵ. ստակ տուգանս տացէ, իսկ որ ոք ի ժամ սուրբ պատարագին անդ ըմբիցի՝ Լ. ստակ տացէ։

Խններորդ՝ պարտ է ժողովոյն պատանեկաց յամենայն տարի զիիշատակ շինել ի մէջ եկեղեցւոյն, և կամ որիշ բան ինչ հոգալ վասն եկեղեցւոյն զինչ որ պէտք լինիցի։

Աչա այս վերոյգրեալքս են հոգեւոր կանօնք, զորս պարտական են անխափան կատարել ամենայն ժողովն պատանեկաց։

Իսկ մարմնաւոր կարգ և կանոնք ժողովոյն պատանեկաց այս է։

Նախ՝ պարտին ամենայն պատանիքն ի միջոյ իւրեանց ընտրել

վասն ինքետնց զպատաճեկապետու, և պատաճեկապետքն՝ ընտրութետմբ պարտին լինել և ի միջոյ ժողովոյն պատաճեկաց։ Սակայն միայն պատաճեկաց ընտրելովն ոչ կարեն պատաճեկապետ լինիլ մինչև ոչ հաստատեսցին զնոտա եկեղեցպանքն, ուստի՝ իշխանքն և եկեղեցպանքն պարտին տալ նոցա հրաման լինել գլխաւոր պատաճեաց և կոչել պատաճեկապետ, զի հաստատուն լիշի ի գործն։

Երկրորդ՝ պատաճեկապետքն պարտին կոտրել զամենայն կարգ և զկանոնո որք գրեալ են ի մէջ կոնդակիս լուս հրամանի մերոյ, և ամենայն պատոնիք պարտին հնազանդ և խանարհ լինիլ ի ներքոյ ձեռաց եկեղեցպանին։ Եւ եթէ պատաճեկապետքն կամ ժողովն պատաճեկաց ունիցին ի մէջ իւրեանց զդատաստան ինչ առնելոյ, ուր և իցէ, և դատելի պատաճին իւրեանց դատաստանին չհաւանիցի, կարող է քարշել զդատաստանն զայն տռածնի եկեղեցպանին, և եկեղեցպանն իշխանօք և ձերովք հանդերձ արդարապէս արասցէ զդատաստանն նոցին, և եթէ պատաճեկապետքն կամ պատաճիքն եկեղեցպանաց դատաստանին չհնազանդեսցին, այնպիսիքն առցեն զպատիժ ըստ հրամանի մերոյ և եկեղեցպանին, և այնպիսւոյն տուգանքն է ծբ։ Հօխայ մո՛մ, զոր առցեն ի նմանէ կամայ և ակամայ և տայցեն վանիցն։

Երրորդ՝ ժողովն պատաճեկաց ոչ կարէ դատել զպատաճեկապետն առանց եկեղեցպանաց, զի իշխանք են ի վերայ ժողովոյն, նմանապէս և պատաճեկապետքն ոչ կարեն դատել զբովոր ժողովն պատաճեաց, այլ միաբանութեամբ իւրեանց ընտրեալ պատաճեացն, հրաման ունին դատելոյ զանկարգն ի միջոյ պատաճեացն ով ոք և իցէ, թէ տուգանօք և թէ պատժօք, բայց արդարութեամբ արասցեն զդատաստանն։

Չորրորդ՝ պատաճեկապետքն պարտին ընտրել իւրեանց հաւանութեամբն ի միջոյ իւրեանց զօմանս գլխաւորս ի մէջ ժողովոյն և զոր ինչ զդատաստանս առնելոյ լինին՝ ընդ նոսս ի միասին արասցեն։

Հինգերորդ՝ ամենայն պատաճի որ դեռ ոչ է հասեալ ի ծբ տարին, զվերոյդրեալ պերպնծայ տուրսն տալոյ կամքն իւրն է.

այոինքն, կամ ի գանձանակն գրամ ձգել և կամ ժողովոյն պատանեկաց հարկս տալ, իսկ յետերկոտասան ամացն, պարա է ժողովն պատանեկաց կամայ և ակամայ առնուլ ի նմանէ զգանձանակն և գրել զանուն նորին ի մէջ գրքոյն պատանեկաց, զի պարտս ունին ամենայն ծնողք, որ ի հասանելն զաւակին իւրեանց ի հասակս պատանեկութեանն զինի ծբ ամացն, տարցեն զնա առաջի ժողովոյն պատանեաց և տացեն զպերպընծայ կոչեցեալ գրամն գանձանակին և զհարկն, սիրով և յօժար կամօք, զի եղբայր լիցի միւս եղբարցն, և զԱռըրբ էջմիածնայ օրհնութիւնն առցէ, որպէս միւս եղբարքն առեալ են, և զհարկն տացէ ժողովոյն որպէս պարու է, զի գանձանակն հաստատեացի վասն սուրբ եկեղեցւոյն ձերոյ շինութեանն և հաստատութեան ձեր պատանեացդ ժողովոյն, զի հաստատ մնացէ որպէս ի վերոյ գրեալ է, ուստի անխափան պարախն առալ:

Վեցերորդ՝ պարտին ամենայն պատանիք տալ զֆլորին, որ սահմանեցեալ է և ապա գրեսցին անուանքն ի մէջ զըբայն պատանեկաց, և այս հասարակապէս, զի զոր ինչ տացէ մէկն, նոյնպէս և միւսն և այլն նոյնպէս:

Եօթներորդ՝ պարտին ամենայն եղբայրակիցք ժողովոյն պատանեկաց ըստ ամենայնի հնազանդ և խոնարհ լինել հրամանաց պատանեկապետացն, զոր ինչ և հրամայեսցին ինքեանց, զի արժամի լինիցին օրհնութեանն մերոյ և մի ընկալցին զպատիժս, վասն զի՝ հնազանդութիւնն է մայր ամենայն յաջողութեանց բարեաց, իսկ անհնազանդութիւնն է մայր ամենայն չարեաց գործոց, վասնորոյ ոչ հնազանդողքն, փոխանակ սիրոյ՝ զդառնութիւն, և փոխանակ օրհնութեան, զանէծս և զպատիժս առնուլն, և զնզովս ժառանգեն:

Ութերորդ՝ ի մէջ այս պատանեկաց ժողավոյ դատաստանին ոչ ոք իշխեսցէ խառնիւ, ոչ հայր, ոչ եղբայր, ոչ ազգական և ոչ ընկեր վասն ընկերի ամենելին բան ոչ ունիցին ընդ նոսա: Ապա թէ ոք չհնազանդիցի ասացելոց և խառնիցի ի մէջ դատաստանի նոցին՝ ծբ մարչիլ տաւ գանս առցեն յայնպիսւոյն վասն վանքին, և ուրիշ տուգանս ևս առնուցուն ի նմանէ հանգերձ ծերօք, մինչև որ մեղայ ասասցէ և դարձցի:

Խններորդ՝ պարտին ի տարւոջն երկու անգամ լնթեռնուլ յամենայն տարի զկոնդակս զայս առաջի ժողովոյն պատահեկաց, զի ամենայն պատանիք զիւրեանց կտնոնն և զսահմանն լոիցեն, և ի միտոս իւրեանց պահեսցեն և արտացեն:

Տասներորդ՝ ամենայն նշանուած պատանի՝ յորժամ որ կամիցի երթալ և պսակիլ զարու է նախ զհաշտելութիւնն առնել ընդ պատանեկապետացն, տալ զբաժինն եկեղեցւոյն, որ է երեք կերպ, ապա տալ և զհարկն պատանեկաց ժողովոյն, ապա թէ ունիցի հրաման պսակելոյ, զի առանց այսպէս առնելոյ, ոչ ունի հրաման պսակելոյ:

Մետասաներորդ՝ յորժամ որ հարսանիք լինելոյ լիցի՝ պարտին ամենայն պատանիքն երթալ ի տուն պատանեկապետին և ընդ նմա ի միասին երթիցեն ընդ առաջ հարսանեացն, բերցեն յեկեղեցին ի պսակել և երթիցեն ի տունն փեսային և մինչեւ ի վերջն սպասաւորեցեն հարսանեացն, և ով ոք ոչ երթիցէ ի տուն վատահին, որպէս գրեցաւ, տուգանս առցեն ի նմանէ բձ. ստակ:

Երկոտասաներորդ՝ յորժամ վատահիքն ժողովեսցեն զպատանիքն ի մէկ տեղ, ինչ բանի համար որ լինի, պարտին ամենայն պատանիքն անդ ժողովել առնոստ, և որ ոք ծուլասոյի կամ ընդգէմ կացցէ և ոչ գնոսցէ ի ժողովն առ պատանեկապետն, տուգանս առցեն ի նմանէ Գձ ստակ: Արդ՝ որ ոք հնազանդէ մեր կարգին և մեր հրամանին, զայս վերոյգրեալ կարդ և կանոնս պարտական են մի ըստ միոջէ պահել և կտարել իսկ ով ոք սոյն կանոնացս և կարգացս չհնազանդի, և կամ ով ոք հակառակ կայցէ պրաստաւայ լինելոյն և չկամիցի որ պրաստաւայ լինի, զանէծս և զնզովս ընկալցի յԱստուծոյ և սուրբ Աթոռոյն էջմիածնէ և ի գերիշխան գլխոյն մերմէ և ի մէնջ, ամէն:

---

Երկայնաբազուկ Արդութեանց Շիօշրէգի որդի Յովսէփ Արքեպիսկոպոս Խուսաց երկրի Հայոց ազգին. ծայրագոյն նուիրակ Ա. Աթոռոյն էջմիածնի, հիմնադիր նոր նախիջևանայ և

այցելու Բեզարաբիու և Մոլդավիու Հայոց, որք են ենթ իշխանութեան երկուց կայսերացն։ Նորոգեցի զկոնդակս պրաստաւայի պատունեկաց ժողովոյն ըստ Խնդրոյ բոլոր հասարակութեանն Պօթիշանու ժողովրդեան մերոյ։ յամի 8եառն 1790, և է հայոց թուականին ՌՄԼԹ. ի փետրուարի 20. ի քաղաքո Պօթիշտն. յերեցքիութեան և ի գործակալութեան պ. Մարտիրոսին Ըմբէի, և ի վատահութեան պրաստաւային Սահակին Մարտիրոսիան և Յովհաննէսին Գրիգորեան։ և վառ առաւել հաստատութեան մեծ կուգով իմով կնքեցի։

1811, յապրիի 10. Ներկայիս գտանեցեալ մեծ պրաստաւայի կտրիճներն Պօթիշտնու, զորս Տէր գորացուացէ քարեկարգութեամբ, ամէն։

- |                                  |   |
|----------------------------------|---|
| 1. Վատահ Սահակ Նիգ օշի.          | 17. Խաչերես Վարդանի Երուշդեան           |
| 2. Վատահ Գրիգոր Անտոնչեանց.      | 18. Կարապետ Վարդանի Երուշեան            |
| 3. Գեորգ Մրցիկի.                 | 19. Յովհաննէս Զատիկի.                   |
| 4. Ստեփան Դաւթի Կոյլեաւեան.      | 20. Դաւիթ Մանուկի.                      |
| 5. Խաչիկ Գրիգորի Աբրահամեան.     | 21. Յարութիւն Յօնիրի Պօլֆուեան          |
| 6. Լուսիկ Ստեփանի Գաֆարձիւեան    | 22. Գեորգ վատահ Աւետիքի                 |
| 7. Յովհաննէս Գրիգորի Զօմաքեան    | 23. Ստեփան Դրանիսոլ Յարութիւնի          |
| 8. Բարսեղ Գրիգորի Զօմաքեան       | 24. Դօտիրաշ լեպէս Յակովի.               |
| 9. Յովհակի միհ. Յօհանի Եակուբեան | 25. Ղազար Ռւբանցի Մկրտչի.               |
| 10. Աստուածատուր մչակի. տէր      | 26. Յարութիւն Դրանիսոլ Քրիստոս Առաքելի. |
|                                  | տաւրի                                   |
| 11. Յարութիւն Գաֆէճի Դավթի.      | 27. Գրիգոր Մանուկի Պաղտասարեան          |
| 12. Մահտի. Ղազար մշտի տէր        | 28. Յովհաննէս լեկզի Յոհանի<br>Առաքելի.  |
| 13. Յօնիկ Նիգուլայի Սչովեցւոյ.   | 29. Խնաօն Մրցիկի.                       |
| 14. Անտօն Յովհաննիսի Պալասան-    | 30. Գրիգոր Խաչիկի Դուրեցդեան            |
| եան.                             | 31. Օգուէնս Խռուլեան Յակոբի.            |
| 15. Սարդիս Յովհաննիսի Պալասան-   | 32. Աւետիք Պաղտասարի.                   |
| եան.                             | 33. Առաքել Սուքիասեան.                  |
| 16. Յարութիւն Հրլվցի. Աղայիկեան  | 34. Դաւիթ Պիղար Պօլոսի.                 |
|                                  | 35. Յօնիկ լեպէտ Գրիգորի.                |

36. Վարդան Խաչերեսի Գաթարձի-  
ւեան 71. Մարկոս Մարգարեան-  
72. Աւետիք բազ Խաչիկի.  
37. Յովհաննէս Գասպար օղուրի. 73. Առաքել Յովհաննիսի.  
38. Գեորգ Յովհաննիսի Մալխանեան 74. Լուսիկ երկայն Վասիլի.  
39. Մալխաս Յովհաննիսի Մալխաս 75. Ղազար Աւետիքի.  
եան. 76. Մանուկ Քօբշանցի Խաչիկի.  
40. Կարապետ Յովհաննիսի Մալ- 77. Հայրապետ Գուճուտարի.  
խանեան 78. Փանոս Գրիգորի.  
41. Լուսիկ Խաչերեսի. Երուշաեան 79. Գրիգոր Դուրեցքի Աստուա-  
42. Յովհաննէս Կյլեաւի. ծատրի.  
43. Գրէջան Խաչիկի Գրէջոնեան 80. Խաչերես Դուրեցքի Գայթանի.  
44. Սարդիս վարպետ Մինասայ. 81. Լուսիկ վատահ Աւետիքի  
45. Աւագ Յովհակիմի.  
46. Յովհաննէս Յակոբի Խաչարեան 82. Յովհ Խաչիկի Պալասանեան.  
47. Գրիգոր Վարդանի Գաթար-  
ճի 83. Կարապետ Փանտուլի.  
48. Անտոն Տրկիղ Յարութիւնի.  
49. Խաչիկ Ստեփանի Ըստաֆայր.  
50. Ստեփան Կարապետի Զօպանեան 84. Գրիգոր Անտոնի Թումանեան.  
51. Անտոն Գեորգի Դրանիսոլեան.  
52. Գայդան Գեորգի Դրանիսոլեան  
53. Մովսէս Նաստուր Գրիգորի  
54. Աթանաս տէրտէրանց Խաչիկ.  
55. Կարապետ Գեորգի Պուլուզեան  
56. Եսայի Դրանիսոլ Յովհաննէսի.  
57. Դաւիթ Դրանիսոլ Յարութիւնի.  
58. Յովհաննէս Մալխասի.  
59. Խաչատուր Էսդիմի Վարդանի.  
60. Յարութիւն Ըստէաի.  
61. Թօնիկ Պատրոսի  
62. Անտոն Մատուրի Ղայսերցայ.  
63. Ղազար Ղուկասի.  
64. Յովհաննէս գուցուդար Բորսոի  
65. Նիկոլ Սահակի.  
66. Խաչերես Նիկոլի Խաթլամայեան  
67. Ստեփան Գիրընց Յարութիւնի  
68. Խաչերես Դատիրաշի Կյլեաւեան  
69. Խաչերես Ներսէսի Կյլեաւեան  
70. Լուսիկ Ներսէսի Կյլեաւեան.
71. Մարկոս Մարգարեան-  
72. Աւետիք բազ Խաչիկի.  
73. Առաքել Յովհաննիսի.  
74. Լուսիկ երկայն Վասիլի.  
75. Ղազար Աւետիքի.  
76. Մանուկ Քօբշանցի Խաչիկի.  
77. Հայրապետ Գուճուտարի.  
78. Փանոս Գրիգորի.  
79. Գրիգոր Դուրեցքի Գայթանի.  
80. Խաչերես Դուրեցքի Գայթանի.  
81. Լուսիկ վատահ Աւետիքի  
82. Յովհ Խաչիկի Պալասանեան.  
83. Կարապետ Փանտուլի.  
84. Գրիգոր Անտոնի Թումանեան.  
85. Մէհի Քրիստոսատուր Սօրոնարի.  
86. Զատիկ Մյլովի Մկրտչի.  
87. Յովհ Դատիրաշի Կյլեաւեան.  
88. Սարդիս Գրիգոր Գրիգորի.  
89. Յովհաննէս լեպետ Յակոբի.  
90. Գրիգոր Վարդանի Երուշաեան.  
91. Մելքիուէթ Խաչերեսի Մելքի-  
սէթեան  
92. Միքայէլ Խաչերեսի Պոլֆուեան  
93. Յարութիւն Կոտիմ Յովհաննիսի  
94. Զատիկ մէհի. Լուսիկի  
95. Ստեփան Զօմագ Գրիգորի  
96. Սնաց Մանուկի միօրձի  
97. Գրիգոր Գոշկայ Վարդանի.  
98. Անտոն պօլֆոս Խաչերեսի  
99. Գեորգ եկեղեցպան Սահակի.  
100. Նիգոլայ Դուրեցքի Խաչիկի.  
101. Մանուկ Մարուկի.  
102. Մարուկ Մելքոնի Նիբոթ.  
103. Միքայէլ Կակոսի.  
104. Գրիգոր Խաթլամայ Զատիկի.  
105. Յակով կէնճ Յարութիւնի.  
106. Ներսէս Լեպետահ.  
107. Յարութիւն Ցէր Աւետիքի.

108. Յովզ. Պօլֆոս Սահակի  
109. Աւետիք Պօլֆոս Սահակի  
110. Յարութիւն Գուշտուդար Սահակի  
111. Յօհան Դրիգորի Յօհանեանց  
112. Ալէքսան մչի. Յակոբի  
113. Դէորդ մչի Յակոբի.  
114. Կարապետ մչի. Յակոբի.  
115. Յակոբ տիբացու Սահակի.  
116. Յովչ. Դրիգորի Տ. Յակոբեան.  
117. Հաճի Եղիս Պըյըքեանց.  
118. Խաչիրես Յօհավ. տերտերանց.  
119. Յարութիւն Ուրմանցի Մկրտչի.  
120. Մանուկ Խաչիկի Մանուկեանց.  
121. Գրիգոր Անտօնի Մատրեանց  
122. Պօլոս մչի Յակոբի
123. Անտօն Գաֆէմի  
124. Յարութիւն Բալթարեան.  
125. Ուրսուլ Կոյլեաւ Դօտերաշի.  
126. Աստուածատուր Ցրկիչ Յարութիւն  
127. Սարգիս Պալասանի.  
128. Ա.ազար Սօրօնար Խաչիկի  
129. Յովչ. Երկայն Օգտէնտի.  
130. Ա.արդան Գաթարճի Յակոբի.  
131. Պօլոս Նիկոլի.  
132. Նիկոլ մչի. Լուսիկի.  
133. Աստուածատուր Մնացի Գոժ  
134. Պօլոս Ամենցի Անտօնի.

Այսօքիկ են այժմ ի Փօթիշտան գտանեցեալ պրաստաւայի կըտրիճքն, զոր կրկին օրհնութեամբ հաստատեցաք: Գրիգոր Արքապիսկոպոս Սրբոյ Եջմիածնի և առաջնորդ կողմանցս Հայոց:

## ԿՐՕՆԻ ՈՒՍՈՒՑՈՒՄՆ.

(Եաբունակ. Լ վերջ):

Ա. Ասքիճան—Նախապատրաստութեան չամ վերլուծաբիւն.

Իւրաքանչիւր մեթոդական միութիւն կամ՝ հատուած պէտք է ունենայ իւր որոշ նպատակը. այս նպատակը հաղորդելուց յետոյ սկսվում է Ա. աստիճանը. այստեղ պէտք է սանիկի ունեցած հին իւրացուցանող մտապատկերները և փորձը յիշեցնել, որպէս զի նոր նիւթի ըմբռնումը դիւրին լինի: Ուրեմն Ա. աստիճանի գլխաւոր գործն է յաջորդող պատմութեան համար հող պատրաստել. դորա հասկացողութեան համար աշխատել և մանկանց սրտերը սպասող դրութեան մէջ գնել: Այս նախապատրաստութեամբ մենք սանիկների մէջ արթնացնում ենք այն մտապատկերներն, որոնք նոր տրուելիք նիւթի հետ կապակցութիւն ունին. ուրեմն ուսուցիչն առաջնուց պէտք է մտածէ և կշռադատէ թէ ի՞նչ մտապատկերներ պէտք է վերաբարերել սանիկի գիտակցութեան մէջ, նա պէտք է սանիկի